Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

16.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 4-ի նյութական իրավունքի բաժնի 22"55-րդ, 24"45-րդ, 25"46-րդ, 34"64-րդ հարցերը, ինչպես նաև դատավարական իրավունքի 7"17-րդ , 16"25-րդ հարցերը:

Նյութական իրավունք

55-րդ հարցի *վերաբերյալ թեև հավակնորդի հիմնավորումներն առ այն, որ առկա է չհաջողված հանցակցության երկու տեսակ, ընդունելի է: Սակայն, հաշվի առնելով, որ ընտրված տարբերակը, մեջբերված իրավադրույթները և եզրահանգումները չեն համապատասխանում միմյանց, հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

45-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները տեղին չեն, հակասում են միմյանց, վճռականություն չի դրսևորում իր կողմից ընտրված պատասխանի հիմնավորման հարցում, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

46-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրում առկա հանգամանքներից, ինչպես նաև փաստական սխալի որակման կանոններից, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

64-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի այդ հիմնավորումները չեն բխում*

իր իսկ կողմից մեջբերված ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումներից, ուստի գնահատականը չի բարձրացվում:

Դատավարական իրավունք

17-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի ըստ քրեական դատավարության օրենսգրքի տրամաբանության կապակցված կարող են կիրառվել սպորագրությունը չհեռանալու մասին և գրավը: Հետևաբար գնահատականը չի բարձրացվում:*

25-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները խնդրում առկա ոչ հստակ հարցադրման պայմաններում ընդունելի են, ուստի տրվում է 1 միավոր:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***8644*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն" դատավարական իրավունքից ստացված 27 միավորը բարձրացնել 1 միավոր՝ արդյունքում արձանագրել 28 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ